

Ա. Հ. Շախսումյան

ՖԻԿԸ ԽԱՔԱՆՈՒ ՔԱՌՅԱԿԻ ԹԱՐԳՄԱՆԻՉ

13-րդ դարի հռչակավոր հայ տաղերգու Ֆրիկի անունով մեզ հասել է հայատառ պարսկերեն մի քառյակ: Նրա միակ ձեռագիրը գտնվում է Օքսֆորդի Բոդլեյան ձեռագրատանը՝ պահպանված 16 համարի տակ:

Քառյակի առաջին հրատարակիչները՝ Մ. Մկրյանն ու Ն. Թորոսյանը այն ղեկավարել են 1941 թվականին Նրևանում լույս տեսած Ֆրիկի բանաստեղծությունների ժողովածուի 86-րդ էջում:

Քառյակը հրատարակել է Տիրայր արքեպիսկոպոսը՝ 1952 թվականին Նյու-Յորքում, Ֆրիկի դիվանի 353-րդ էջում:

Ֆրիկի 1941 թվականի ժողովածուն կազմողները ոչ միայն փորձ չեն կատարել պարզելու, թե ում է պատկանում հայատառ պարսկերեն այդ քառյակը, այլև չեն վերծանել ու թարգմանել այն: Ինչ վերաբերում է Տիրայր արքեպիսկոպոսին, ապա նա, պարսկերեն չգիտենալով, դիմել է նշանավոր իրանագետ Մ. Թիրաքյանին, որը նրա համար վերծանել, վերականգնել և թարգմանել է ամբողջ քառյակը, բացի նրա սկզբի երեք՝ (յարմուտ պախի էշխի) բառերից:

Ֆրիկի հայատառ պարսկերեն քառյակի վերծանմամբ 1956 թվականին պրակտիկում են վ. Ավթանդիլյանը և Հ. Փափաղյանը, այդ մասին գրելով Հայկական ՍՍՌԻ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրի» (հասարակական գիտութ.) նույն թվականի երրորդ համարում: Նրանք ենթադրաբար կարդում են քառյակի սկզբի երեք աղավաղված բառերը, նկատում, որ քառյակին հաջորդող չորս տողը հենց նրա թարգմանությունն է, որը ժայնքան հարազատ և իրեն հատուկ գեղարվեստական բարձր կատարելությամբ կատարել է մեր տաղանդավոր տաղերգուն:

Ստորև բերում ենք այդ քառյակի վերականգնված պարսկերեն տեքստը, նրա թարգմանությունը ժամանակակից հայերենով և Ֆրիկի թարգմանությունը՝ ըստ Բոդլեյան ձեռագրի.

Դաւ մուտպախի էշխ ջուղ նեհու բա նա'նուանդ,
Լուզար սիֆսաթան ու զիշա խու բա նա'նուանդ:
Դաւ աշիդի սաղեզի գի ֆուշաան մազեզ,
Խուրդար պուաբ զար աշի վաի բա նա'նուանդ:

Ոհրո զոհաբանում լավից բացի ոչ մեկին չե'ն զոհում.
Անեկարագիր և վատաբառ մազկանց չեն զոհում.
Իրա աեկեզ՝ սիրաւար ևս, զոհվելուց մի խուսափիր
Պիղծ կլինի այն (կենդանին), որին չեն մոռում:

Ի սուրբ սեղանոյն վերայ քան զաղէկն այլ իմ չի զենեն.

Ձենիխաբն ու զվատուն, Եղբայրս աստուծոյ զայն ե'րբ զբրբեն:

Թո'ղուրդ սիրելի ևս դու, հանց առաւ, որ զեկ չհուռն.

Դիտեմ' անպիտան զառնայ այն մատաղն, որ զինեն չի զենեն:

Ո՞վ է եղել այս քառյակի հեղինակը, Ֆրիկը, թե մի այլ բանաստեղծ.—
ահա այն հարցը, որ մտահոգել է ոչ միայն Տիրայր արքեպիսկոպոսին, այլև
Վ. Ավթանդիլյանին ու Հ. Փափագյանին:

Տիրայր արքեպիսկոպոսը գրել է, որ այդ հարցը ինքը թողնում է անպա-
տասխան, որովհետև իր բարեկամ Մ. Թիրաքյանը հայտնել է, թե «ով է քառ-
յակիս հեղինակը, կը ցավիմ որ ինձ հայտնի չէ» (Դիվան, էջ 124):

Նույն հարցին չեն պատասխանել նաև Վ. Ավթանդիլյանն ու Հ. Փափագ-
յանը: Սակայն նրանք ելնելով քառյակի վերջին տողում արտահայտված
մուսուլմանական այն հասկացողությունից, թե զոհված (մորթված) կենդանու
մարմինը մաքուր է, իսկ մեռածինը՝ պիղծ, եկել են այն եզրակացության, որ
նրա հեղինակը Ֆրիկը չէ, որ «այն ամենայն հավանականությամբ պատկանում
է 10—13-րդ դարերի պարսիկ քառյակագիրներից որևէ մեկին» («Տեղեկագիր»,
էջ 89):

Քառյակի հեղինակի մասին վերջնական խոսք չի ասել նաև այդ հարցով
զբաղված հաջորդ բանասերը՝ Բ. Զուգասզյանը: «Բանբեր Մատենադարանի»
1958 թվականի չորրորդ համարում տպագրած իր «Ֆրիկը պարսկերեն քառյակի
թարգմանիչ» հոդվածում (էջ 111—120), նա փաստ է բերել այն մասին, որ
իրեն հաջողվել է Ֆրիկյան քառյակին հանդիպել 1935 թվականին Թեհրանում
լույս տեսած Մոհամադ Ալի Թարբիաթիի «Ազերբայջանի գիտունները» գրքում,
որտեղ այն վերագրված է հորուֆյան աղանդավորական շարժման ղեկավար
Ֆազլուլահ Նաիմիի աղջկան: Սակայն քաջ գիտենալով, որ Ֆրիկը, համարյա
մի ամբողջ դար առաջ է ապրել քան Ֆազլուլահն ու նրա աղջիկը: Բ. Զուգաս-
զյանը աշխատել է գտնել այլ աղբյուրներ: Նա կանգ է առել «Թեհրանի համալ-
սարանի գրականության ֆակուլտետի հանդեսի» 1954 թվականի դեկտեմբերի
համարում լույս տեսած ղոկտոր Սադիկ Քիայի հոդվածի վրա: Այնտեղ նա հա-
ղորդում է գտել այն մասին, որ մեր խնդրո առարկա քառյակը, հետևյալ վեր-
տառությամբ «որպես խոդավանդեգար (արարիչ աստված) հռչակված մեծ
Սեյիդի խոսքերից» տպագրված է 1870 թվականին Կոստանդնուպոլսում հրա-
տարակված 14—15-րդ դարերի աղբյուրներից ականավոր բանաստեղծ Իմադ
էդ-դին Նասիմիի Դիվանում: Տեսնելով, որ «գոթախտաբար հարդելի ղոկտոր»
չի նշում, թե ով է եղել այդ «խոդավանդեգար մեծ սեիդը», որ գրել է ֆրիկ-
յան քառյակը, Բ. Զուգասզյանը այլևս ուրիշ աղբյուրներ չի որոնել, աշխատել
է արդեն գտած փաստերի հիման վրա, հանգել որոշ եզրակացությունների:
Նրա ասելով «մինչև այն ժամանակ, երբ դեռ չէր հայտնաբերվել քառյակի
հայերեն թարգմանությունը Ֆրիկի բանաստեղծությունների մեջ, եղած փաս-
տերի հիման վրա հնարավոր էր եզրակացնել, որ քառյակի հեղինակը կամ
Ֆազլուլահը և կամ իր աղջիկն է, և հետագայում որևէ գրչի կողմից այն մուծ-
վել է Ֆրիկի Դիվանը: Բայց ներկայումս, երբ մեր առջև է նաև հայերեն թարգ-
մանությունը, նման ենթադրություն անել չի կարելի, որովհետև քառյակի թարգ-
մանիչը՝ Ֆրիկը, համարյա մի ամբողջ դար առաջ է ապրել, քան Ֆազլուլահն
ու իր աղջիկը» (էջ 117):

Բ. Զուգասզյանը ենթադրում է նաև, որ հնարավոր էր կարծել, թե քառ-
յակի հեղինակը եղել է հենց ինքը՝ Ֆրիկը, որովհետև «ինչպես ցույց են տալիս
փաստերը, նա շատ լավ տիրապետել է պարսկերեն լեզվին», բայց այս են-
թադրությունը ևս անհավանական է, որովհետև դա հերքվում է Ֆրիկի ողջ ստեղ-

ծագործության ոգով, որը միանգամայն հակասում է քառյակի պարսկերեն բնագրի մեջ արտացոլված միստիքական սիրո հասկացողությանը»:

Հուրախություն Վ. Ավթանդիլյանի, Հ. Փափազյանի, Բ. Չուգասզյանի և նրանց, ովքեր հետաքրքրվում են քննարկվող քառյակով, շտապում ենք հաղորդել, որ Ֆրիկյան քառյակը մեզ հաջողվեց գտնել 1907 թվականին Նուբիշվարում լույս տեսած Ադրբեջանի «Խոդավանդեգար մեծ սեիդ» կոչված բանաստեղծի՝ էֆղալ էդ-դին հաքանիի (1120—1199) «Քուլլիաթ»-ի (ժողովածուի) 1292-րդ էջում, որն ունի հետևյալ տեսքը.

Դար մուլի էշիս հար ևեֆու րա նա'ֆուշանդ
 Լադար սիֆաթան ու զիշխու րա նա'ֆուշանդ,
 Գար աշիդի սադեդի զի ֆուշթան մագրէզ
 Մուրոար բուաթ հար անշի, ֆե ուրա նա'ֆուշանդ:

Ակնհայտ է, որ սա նույն Ֆրիկյան քառյակն է, որը բացառությամբ առաջին տողի «մուլի» (հարստություն, ունեցվածք) «հար» (ամեն) և վերջին տողի «քե ուրա» (որ նրան) բառերի ճշտությամբ վերծանվել է Մ. Թիրաքյանի, Վ. Ավթանդիլյանի և Հ. Փափազյանի կողմից:

Այսպիսով, եթե հաստատ է, որ մեր խնդրո առարկա քառյակի հեղինակը հաքանին է, ապա Ֆրիկը ներկայանում է մեզ ոչ միայն որպես բանաստեղծ, այլև շնորհալի մի թարգմանիչ, որն իր գործունեությամբ, յոթ հարյուր տարվա թանձրության միջից, ձեռք է մեկնում մեզ և կանգնում ժողովուրդների բարեկամության ու նրանց կուլտուրական համագործակցության համար պայքարողների շարքերում: